— Սատկի՛ Մըհէն, ես նրան էլ չպէտք է սիրեմ, — պատասխանեց նա, երբ կրկին տեսաւ սպանուած շանը, որի ահագին դիակը պառկած էր բակի մէջ:

Միւս շները հաւաքուել էին եւ լիզում էին իրանց բարեկամի վէրքը: Կարծես, ուզում էին բժշկել նրան:

Մենք գնացինք սենեակը:

— Ես գիտեմ Մըհէն ուր գնաց Մարօ:

— Ու՞ր գնաց:

— Չեմ ասի, վախենում եմ ուրիշին ասես:

— Ես խօ երեխայ չեմ:

Ես յայտնեցի Մարօին, ինչ որ գիտէի Մըհէի ճանապարհորդութեան նպատակի մասին: Նրա դէմքն ընդունեց խիստ աղօտ արտայայտութիւն եւ խօսեց բարկացկոտ, դողդոջուն ձայնով:

— Ես հաւատում եմ, նա կանէ, նա պատրաստ է ամէն բան անել, երբ հայրս հրամայում է նրան: Ա՛խ, հայրս...

Նա խեղդեց իր ձայնը եւ չշարունակեց խօսքը:

Ռոպէական լռութիւնից յետոյ նա ասաց.

— Դու գիտե՞ս, Ֆարհատ, Մըհէն մարդասպան է:

— Որպէ՞ս:

Մարօն պատմեց, թէ Մըհէն հաղբակեցի չէ, ինչ որ երկրից է, որի անունը մոռացել է, բայց այն երկիրը շատ հեռու է: Թէ նա, Մըհէն ունեցել է մի քոյր, որպէս ինքն է ասում, գեղեցիկ աղջիկ: Նրանց գիւղի աղայի տղան աչք է ունեցել Մըհէի քրոջ վրայ: Քոյրը յայտնել է եղբօրը: Աղայի տղան հայ չէ լինում, «անօրէնէ պարսիկ է լինում: Մի օր քոյրը մենակ գնում է դաշտից խոտ քաղելու, աղայի տղան նրան բռնում է, չարչարում է... Մըհէն վրայ է հասնում եւ իր դանակով նրա վիզը կտրում է, ու յետոյ թողնում է այն երկիրը, փախչում է:

Ես Մարօին պատասխանեցի, թէ այս գործի մէջ Մըհէն շատ յանցաւոր չէ, թէ ես ինքս այնպէս կը վարուէի, եթէ մէկը համարձակուէր անպատուել իմ քրոջը:

— Ես ինքս կը սպանէի մի այնպիսի տղին, եւ չէի թողնիլ, որ եղբայրս մէջ մտնէր, — պատասխանեց Մարօն: — Բայց Մըհէն այստեղ էլ շատ բաներ է արել...

— Ի՞նչ բաներ: